



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովման» ծրագիր

## Հետազոտական աշխատանք

**Դպրոց՝** «Արարատի մարզի Մրգավետի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

**Առարկա՝** «Մայրենի », «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա»

**Թեմա՝** « Գործնական աշխատանքների իրականացումը տարրական դպրոցի 3-րդ դասարանում»

**Վերապատրաստող**

**Մենթոր՝** Գայանե Մանուկյան

**Ուսուցիչ՝** Ալինա Գրիգորյան

## Բովանդակություն

1. Ներածություն .....	3
2. Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին .....	4
2.1 Գործնական համատեքստ .....	5
3. Գործնական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին .....	7
3.1 Տեսական գիտելիքը հիմնավորող գործնական աշխատանքներ.....	8
3.2 Նախագծային բնույթի գործնական աշխատանքներ.....	8
3.3 Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ .....	10
4. Տեխնոլոգիա առարկայի կիրառման նշանակության մասին .....	11
4.1 Ինտեգրված դասի պլանավորման նմուշօրինակ <<Տեխնոլոգիա>> առարկայից ..	11
4.2 Նպատակները .....	12
Եզրակացություն .....	20
Օգտագործված գրականության ցանկ .....	21

# 1. Ներածություն

Երեխաների մտածողությունը տարրական դասարաններում, հիմնականում ակնառու-պատկերավոր և ակնառու գործնական է: Հետևաբար տեսական հետազոտությունները կատարվում են հանուն պրակտիկ գործունեության զարգացման:

Գործնական աշխատանքները նպաստում են սովորողների մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարևորը տարանջատելու կարողությունների զարգացմանը:

Աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս: Այն աշխատանքները, որոնք վերաբերում են սովորողների կողմից ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների գործնական կիրառություններին անվանում են գործնական աշխատանքներ: Հիմնական նպատակներն են՝

- Նպաստել անհատի կենսագործունեության, ինքնադրսևորման և կրթության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:
- Մատուցել կիրառման համար տեսական և գործնական նյութեր:
- Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ:

Գործնական աշխատանքը, որպես մանկավարժական երևույթ, մի կողմից ուսումնական առաջադրանք է, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան մտածողության ստեղծագործական դրսևորման ձև, այն տալիս է սովորողներին նոր գիտելիքներ:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու, սեփական գործունեության արդյունքները նախագծելու հնարավորություններ, տեսականը վերածելու գործնականի:

Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն, ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը:

## 2. Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին

Սովորողների ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տեսակի գործնական աշխատանքներ.

- ✓ Պատմության գծապատկերների կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով,
- ✓ Բառերի, վանկերի կազմության գծապատկերներ,
- ✓ Դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ,
- ✓ Գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն,
- ✓ Տեքստի սխալների ուղղում, խաթարված հերթականության շտկում,
- ✓ Հեքիաթների նկարագրողում,
- ✓ Մանկական հանրագիտարաններից, բառարաններից, ուսումնական ձեռնարկներից տեղեկությունների որոնում առաջադրված հարցերին պատասխանելու համար:

Նպատակաուղղված աշխատանքի ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները

- ✓ Ճանաչողական գործընթացի զարգացում, մտածական գործընթացների զարգացում,
- ✓ Սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացում,
- ✓ Հետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում,
- ✓ Ինքնակրթության կարողությունների ձևավորում,
- ✓ Համագործակցային և հաղորդակցային կարողությունների զարգացում:

Հիմնականում գործնական աշխատանքը նպատակաուղղված է երևակայության ստեղծագործական մտածողության դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը: Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Առաջին դասարանից սովորողներին պետք է սովորեցնել հետազոտության հետևյալ ձևերը՝

- Դիտել հեռուստացույց,
- Մտածել Ինքնուրույն
- Հարցնել մեկ ուրիշից
- Կարդալ գրքերում
- Տեղեկություն ստանալ համացանցից
- Հարցնել համապատասխան մասնագետներից
- Փորձեր կատարել

Գործնական աշխատանքի ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառումները:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները:

- Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա նպատակ:
- Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:
- Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:
- Ցուրաքանչյուր սովորող պետք է իմանա կատարման ընթացքը և յուրացնի ինքնուրույն գործելու հնարները:
- Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
- Գործնական աշխատանքի բովանդակությունը, քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնի:
- Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

## 2.1 Գործնական համատեքստ

1. Ուղղորդող հարցերի միջոցով սովորողներին մղել ակտիվ մասնակցության:

2. Աշակերտները կցուցադրեն իրենց կատարած նկարագրողումները:

3. «Բաց հարցերի» մեթոդի միջոցով կհավաքագրեն տվյալները:

Իմ հետազոտության նպատակն է գործնական աշխատանքների միջոցով ուսումնասիրել աշակերտի մտածողության ու ազատ արտահայտվելու կարողությունը: Հետազոտության մեթոդ ընտրել եմ երրորդ դասարանում Հովհաննես Թումանյանի «Սուտիկ որսկանը» հեքիաթը:

**Խթանման փուլ:** Աշակերտներին ուղղվող հարցեր՝

- Ինչո՞ւ է այս հեքիաթը վերնագրված «Սուտիկ որսկանը»:
- Շարունակիր: Որսորդները հանդիպեցին երեք լճի, երեք..., երեք..., երեք..., երեք...:
- Սուտիկ որսկանի երևակայական աշխարհում ո՞ր սուտը քեզ ամենաշատը դուր եկավ, ո՞րն ավելի զվարճացրեց: Դու էլ փորձիր հորինել մի զվարճալի պատմություն:
- Ի՞նչ տարբերություն երևակայական զվարճալի ստի և սուտ խոսելու միջև:
- Ընկերներով բեմականացրեք հեքիաթը: Դու ո՞ր դերը կընտրես, ինչո՞ւ:

**Իմաստի ընկալման փուլ:** Այս փուլում սովորողները հաղորդակցվում են նոր տեղեկատվության և նոր գաղափարների հետ:

Աշակերտների՝

- Առաջին խումբը սկսում է հորինել գվարճալի ստեր:
- Երկրորդ խումբը կարդում է հեքիաթը և բեմականացնում:

**Կռադատման փուլում** աշակերտները հարցեր են տալիս, մեկնաբանում հեքիաթը, վերլուծում, բանավիճում և կատարում եզրահանգումներ:

### 3. Գործնական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին

Յուրաքանչյուր աշակերտ պետք է հեռու լինի սահմանափակ, կաղապարված մտածողությունից, նա պետք է կարողանա թափանցել ցանկացած խնդրի մեջ, վերլուծել սովյալ երևույթը, կարողանա կատարել համադրում, եզրահանգում: Երեխաները պետք է կարողանան ինքնուրույն լուծել ցանկացած ուսումնական խնդիր, վերլուծել և դուրս գալ պրոբլեմատիկ իրադրությունից: Տարրական դասարաններում մտածել սովորեցնելու գործընթացը կարելի է կազմակերպել գննության կիրառմամբ:

Թեմայի նպատակն է ուսումնասիրել գործնական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին: Ելնելով թեմայի նպատակից առաջ ենք քաշել մի շարք խնդիրներ.

- Բացահայտել գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացը մաթեմատիկայի դասերին:
- Կատարել դասագրքերում հանձնարարվող գործնական աշխատանքների ուսումնասիրություն:
- Դիտարկել գործնական աշխատանքների գնահատման սկզբունքներն ու մոտեցումները:

Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը: Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է.

- ✓ Ապահովի աշակերտների գործնական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով:
- ✓ Նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն տեսականորեն ծանոթանան այն նյութին, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարավորություններին ու միջոցներին:
- ✓ Վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքներին:
- ✓ Վերլուծի և գնահատի կատարած աշխատանքը:

Մաթեմատիկայի գործնական աշխատանքներն բնույթով և նպատակով մոտ են ուսումնական մյուս առարկաների լաբորատոր աշխատանքներին: Մաթեմատիկայի գործնական առաջադրանքները կարելի է հանձնարարել ինչպես թեմայի ուսուցումը սկսելուց առաջ, այնպես էլ թեմայի ուսուցումն ավարտելուց հետո:

### 3. 1 Տեսական գիտելիքը հիմնավորող գործնական աշխատանքներ

Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտությունների ձևավորմանը (երկրաչափական պարզագույն կառուցումների վրա հենված խնդիրներ, թվաբանական գործողությունների կատարում և այլն):

**Չետագոտական բնույթի գործնական առաջադրանքներ:** Այս խմբի մեջ կարելի է դասել այն առաջադրանքները, որոնց կատարումը պահանջում է ինքնուրույն հետազոտության իրականացումը, փոխադարձ կապերի բացահայտում մաթեմատիկական հիմնավորում:

Ուսուցիչը պետք է հնավարություն տա սովորողին գործնական և հետազոտական աշխատանքների միջոցով գտնել իր հարցի պատասխանը: Նման դեպքերում աշակերտը ստանձնում է ակտիվ մտածողի, հետազոտողի դեր:

Սովորողը պետք է, որքան հնարավոր է, ինքնուրույն աշխատանքի մեծ փորձ ձեռք բերի: Բայց, եթե նա միայնակ թողնված է խնդրի հետ՝ առանց որևէ օգնության, կամ, եթե այդ օգնությունը անբավարար է, ապա ոչինչ չի մնա աշակերտին անելու:

Ուսուցիչը պետք է օգնի, բայց ոչ չափազանց շատ և ոչ չափազանց քիչ: Պետք է օգնել այնպես, որ աշակերտին մնա աշխատանքի խելամիտ բաժինը:

Պետք է, դասը հետաքրքրի դարձնելով, օգնելով աշակերտին՝ ուսուցման գործընթացում ձեռք բերել ինքնուրույնություն, հանդես բերել նախաձեռնություն, սովորեցնել «հայտնագործել»:

Օրինակ՝ եռանկյունների նմանության թեման ուսումնասիրելիս կարելի է հանձնարարել, որ աշակերտը տեսնում գծի համապատասխանաբար հավասար անկյուններով մի քանի եռանկյուններ, հաշվի դրանցից յուրաքանչյուրի կողմերը, գրանցի եռանկյունների համապատասխան կողմերի երկարությունները աղյուսակում:

### 3.2 Նախագծային բնույթի գործնական աշխատանքներ


Դպրոցում սովորող աշակերտը ուր էլ որ գնա պետք է լինի որոնող, ստեղծագործող, ձևավորող: Պետք է ունենա կյանքում իր առաջ ծագած խնդիրների լուծումները գտնելու կարողություն: Սովորողների մեջ նման կարողություն կարելի է զարգացնել, եթե ուսուցման ընթացքում մեծ տեղ հատկացվի նախագծային բնույթի հանձնարարությունների կատարմանը:

Նախագծային բնույթի հանձնարարությունների կատարումը սովորողներից պահանջում է ոչ միայն մաթեմատիկական գիտելիքների առկայություն, ինչը խիստ կարևոր է, ունեցած գիտելիքները կոնկրետ պայմաններում կիրառելու և տեսությունը պրակտիկայի պահանջներին ծառայեցնելու կարողություն:




3-րդ դասարանում ընտրել եմ հետևյալ գործնական աշխատանքները.


1. Առանձնացրո՛ւ այն պատկերները, որոնք միմյանց վրա տեղադրելիս համընկնում են:



2. Կազմի՛ր հավասար պատկերների զույգեր:



3. Առանձնացրո՛ւ համընկնող պատկերների զույգերը:




### 3.3 Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն:


Օրինակ՝ Թեմա <<Պատկերների մակերեսներ>>:

1. Հաշվել պատկերի մակերեսը (նկար 1)՝ յուրաքանչյուր փոքր վանդակի մակերեսը համարելով 4 սմ



Նկար 1

2. Հավասար են արդյոք.



3. Կարելի է արդյոք պնդել, որ՝

- 1) Հավասար պատկերներն ունեն հավասար մակերեսներ,
- 2) Եթե բազմանկյունը բաղկացած է մի քանի բաղադրիչ բազմանկյուններից, ապա նրա մակերեսը հավասար է բաղադրիչ բազմանկյունների մակերեսների գումարին:

## 4. Տեխնոլոգիա առարկայի կիրառման նշանակության մասին

Տեխնոլոգիա հունարենից թարգմանաբար նշանակում է արվեստ, ունակություն, վարպետություն: Տեխնոլոգիա առարկայի դերն է զարգացնել երեխայի մեջ հոգեբանական, ինքնուրույն ստեղծագործական ունակություններ: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը հնարավորություն է տալիս երեխային, անկախ իր առողջական վիճակից, զարգանալու և սովորելու առարկան, այդ պատճառով շատ կարևոր է այս առարկայի ուսուցումը դպրոցներում, որը նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացմանը, որոնք հատուկ ուշադրության կենտրոնում են և կատարում են ավելի պարզ աշխատանքներ, որը նպաստում է նրանց հոգեկան վիճակի կայունությանը և զարգացմանը: Տեխնոլոգիան մի առարկա է, որը նպաստում է թե՛ առողջ, թե՛ մտավոր թույլ ունակություններով երեխաների աճին և զարգացմանը: Այս առարկան երեխաների մեջ զարգացնում է բարություն, պատրաստակամություն, օգնելու ձեռք մեկնելու նրանց, ովքեր ունեն դրա կարիքը և զարգացնել հարգանք դիմացինի նկատմամբ:

Տեխնոլոգիա առարկայից հետազոտության համար ընտրել եմ 3-րդ դասարանի <<Ջրային թռչուն>> թեման:

### 4.1 Ինտեգրված դասի պլանավորման նմուշօրինակ <<Տեխնոլոգիա>> առարկայից

Աշխատանք թղթով և սովարաթղթով

Դասի թեման՝ Ջրային թռչունի պատրաստում՝ օրիգամիի տեխնիկայով

Դասարան՝ երրորդ

Դասի տիպը՝ նոր կյուբի հաղորդման դաս

Գերիշխող առարկա՝ տեխնոլոգիա

Ինտեգրված առարկաներ՝

1. Մայրենի
2. Մաթեմատիկա
3. Ես և շրջակա աշխարհը
4. Երաժշտություն
5. Ֆիզկուլտուրա
6. Կերպարվեստ

## 4.2 Նպատակները

1. Բաղիկի պատրաստում՝ թղթի ծավման տեխնիկայով:
  2. Կարդավ գծագրերը և կատարել առաջին գծագրական քայլերը:
  3. Թեմայի ուսուցմանը զուգընթաց հետևել, որ սովորողների մեջ ձևավորվեն բնավորության լավագույն գծեր՝ համբերատարություն, նպատակասլացություն, դժվարությունները հաղթահարելու կամք, համագործակցելու պատրաստակամություն:
  4. Չարգացնել՝ ձեռքի մանր շարժունակությունը, մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը: Հարստացնել բառապաշարը, հղկել խոսքը:
- 5. Դաստիարակել՝**
- ❖ Գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողություն
  - ❖ Աշխատասիրություն մշակել հանգիստ, մաքուր և խնայողաբար աշխատելու կարողություն:
  - ❖ Վստահություն ներշնչել սեփական ուժերի և ունակությունների հանդեպ:  
Կահավորումը.
    1. Նյութեր՝ գունավոր թղթեր, ինքնասունձվող թղթեր
    2. Գործիքներ՝ մկրատ, սոսինձ, քանոն
    3. Դիտողական պարագաներ՝ բաղիկների նկարներ, խաղալիք բաղիկ, որի մեջքին դրված են բաղիկի փոքրիկ նկարներ գնահատման համար, փուչիկներ, բաղիկի պատրաստման մեծադիր գծագրեր,
    4. Ցուցապաստառ, որտեղ փակցվելու են պատրաստի աշխատանքները:

## Դասի ընթացքը

- Ուսուցիչը ծավալում է անմիջական զրույց երեխաների հետ.
- Մենք սիրո՞ւմ ենք աշխատել:
  - Այո՞, -պատասխանում են միասին՝ երկու ձեռքերը վեր բարձրացնելով:
  - Այսօր ինչպե՞ս ենք աշխատելու:
  - Սիրո՞ւմ
  - Այսօր պատրաստելու ենք ջրային թռչուն. ի՞նչ ջրային թռչուններ գիտեք:
  - Կարապ, բադ, սագ:
  - Ի՞նչ են թռչունները մեզ համար:
  - Մեր թևավոր բարեկամներն են, երկնքի զավակները, գարնան ավետաբերները: Նրանք մեր ուրախությունն են, պարգևում են երգ ու ծիծաղ:
  - Երեխաներ, մենք արդեն պատրաստել ենք կարապ. հիմա պատրաստելու ենք բադ թղթի ծավումներով, այսինքն՝ օրիգամիի տեխնիկայով:
  - Վերհիշե՞նք՝ ի՞նչ է օրիգամին: Դա հին ճապոնական արվեստ է: Ի՞նչ է նշանակում օրիգամի:
  - Օրիգամի նշանակում է՝ օրի-ծավում և գամի-թուղթ, այսինքն՝ ծավված թուղթ:
  - Ո՞րտեղ է առաջացել օրիգամին:

-Օրիգամի արվեստն առաջացել է ճապոնիայում:Այնուհետև աստիճանաբար տարածվել է Եվրոպայում,Ամերիկայում,Ռուսաստանում:Այդ երկրներում բացվել են դպրոցներ,օրիգամիի կենտրոններ,կազմակերպվել են ցուցահանդեսներ,մրցույթներ:

-Սկզբում ո՛վքեր էին զբաղվում օրիգամիով:

-Հնում օրիգամին եկեղեցական արվեստ էր:Դրանով զբաղվում էին եկեղեցու ծառայողները,քանի որ այդ ժամանակ թուղթը շատ թանկ էր և հասանելի էր միայն եկեղեցականներին:Հետո,երբ մարդիկ սկսեցին շատ թուղթ արտադրել,օրիգամին տարածվեց և մուտք գործեց թագավորական պալատ՝ արքունիք:Կայսրը և պալատականները զբաղվում էին այդ արվեստով:Նրանք պատրաստում էին թռչուններ,կենդանիներ,տարբեր առարկաներ՝

բաժակ,շնիկ,թիթեռ,ինքնաթիռ,կարապ,բադիկ:

Այժմ մենք էլ դառնանք հրաշագործներ,և,օգտագործելով օրիգամի գեղեցիկ արվեստը, պատրաստենք ջրային թռչուն՝ բադ:

-Սիրելի՜ երեխաներ,այսօր մեզ կրկին հյուր է եկել կախարդական քառակուսին: Ինչպես արդեն գիտենք,նա հրաշքներ է գործում:Նա կարող է անընդհատ կերպարանափոխվելով ստանալ ցանկացած տեսք:

-Այդպիսի մոգական քառակուսի էլ ո՞ր առարկայի դասաժամերին ենք հանդիպել:Ի՞նչ առանձնահատկություն ունի մաթեմատիկական հետաքրքրաշարժ քառակուսին:

-Իսկ հիմա կարո՞ղ եք անել՝ ինչպես պետք է մեզ դրսևորենք: Ի՞նչ անենք,որ հասնենք մեր նպատակին:Այդ հարցը մենք քննարկել ենք «Ես և շրջակա աշխարհը» դասաժամին:

-Պետք է լինենք

աշխատասեր,ջանասեր,համառ,համբերատար,նպատակասլաց,ընկերասեր,փոխադարձաբար օգնենք միմյանց,համագործակցենք:

-Ձեր ասածները հաստատե՞ք ասացվածքներով:

- Խոսքը գործի կեսն է:
- Խոսքը քամուն մի՛ տուր:
- Յոթ անգամ չափի՛ր, մեկ անգամ կտրի՛ր:
- Համբերությունը կյանք է:
- Ուս ուսի,որ տանք,սարեր շուռ կտանք:
- Մենակ՝ ծառ ես,ընկերներով՝ անտառ:
- Մի՛ ասա՝ չեմ կարող,ասա՝ չեմ ուզում:
- Աղմուկը՝ մեծ,գործը՝ փոքր:
- Ով չի աշխատում,նա չի սխալվում:

**-Ի՞նչ կասեք ձեր ընկերներին,երթե դժվարանան աշխատել:**

**-Իմ լավ ընկեր,**

**Եղի՛ր ուշիմ ու լավ նայի՛ր,**

**Թե մեր գրքում**

**ի՞նչ բազմազան ծալումներ կան:**

**Ծալումներն այդ,**


**Թե ճիշտ անես,**

**Կստանաս դու սիրուն բադիկ:**

**Թե չստացվի,դու մի՛ տխրիր,**

**Կդիմես մեր օգնությանը:  
 Մենք պատրաստ ենք օգնել իրար,  
 Փորձությունից պատվով դուրս գալ:**

-Հիմա բացեք դասագիրքը, էջ 22: Կարդանք բաղիկի պատրաստման գծագիրը և աշխատանքի ընթացքը: Նույն գծագիրը մեծացրած կա գրատախտակի վրա:



-Երկրաչափական ո՞ր պատկերի միջոցով ենք ստանալու բաղիկը: Ի՞նչ գիտենք քառակուսու մասին: Ի՞նչպես է կոչվում քառանկյան 2 հանդիպակաց գագաթները միացնող ուղիղը:

-Անկյունագիծ:

-Ի՞նչ կատանանք, եթե քառակուսին ծալենք անկյունագծով:

-Ի՞նչ են ցույց տալիս սլաքները:

-Ծալման ուղղությունը:

-Հիմա մի փոքր ֆիզկուլտ-դադար անենք, շարժենք մեր մատները և երգենք, որպեսզի կարողանանք շատ գեղեցիկ պատրաստել մեր բաղիկին:

Երեխաները «հինգ փոքրիկ բաղիկներ» երգի ուղեկցությամբ պարում են ու կատարում համապատասխան շարժումներ:

-Սկսում ենք պատրաստել բաղիկին: Վերցրե՛ք ուղղանկյուն թուղթ, դարձրե՛ք քառակուսի, ավելորդ մասը կտրեք քանոնով:

Աշակերտներն ինքնուրույն, ըստ գծագրի, պատրաստեցին բաղիկը:

-Ինչպիսի՞ թռչուն է բաղիկը:

-Ջրային, ջրլող: Լինում են վայրի և ընտանի: Վայրի բաղիկները չվող թռչուններ են: Նրանք չվում են եռանկյունաձև երամներով: Առջևից թռչում են հասակավոր, ուժեղ բաղերը, իսկ վերջում՝ երիտասարդներն ու թույլերը: Նրանք ապրում են լճերի, լճակների ճահճուտներում, դաշտավայրերում:

-Ի՞նչով են սնվում:

-Ուտում են որդեր, միջատներ, խիտունջներ, բույսեր:

-Երեխաներ, ամբողջական պատասխանը կգտնեք *կապույտ փուչիկի*

*մեջ*: (Աշակերտներից մեկը պայթեցնում է կապույտ փուչիկը և կարդում գրվածը):

Բադերն ու սագերը մարդկանց տալիս են համեղ միս, ձու, փետուր: Սագի ճարպը ցրտահարությունը բուժելու լավագույն միջոց է: Սագի փետուրը ծառայել է նաև որպես գրիչ: Շատ ձեռագիր մատյաններ գրվել են սագի փետուրով: Աշակերտները կարդում են բանաստեղծություններ բադիկի մասին, առաջադրում և գուշակում հանելուկներ, շուտասելուկներ:

**Շուտասելուկ**

Բադը պատին բարձացավ,  
Պատը բադից ծանրացավ:

**Հանելուկ**

Պաղ ջրերում լողալ գիտեմ,  
Արևի տակ շողալ գիտեմ,  
Ինձ կոչում են կարմրատոտիկ  
Իմ անունը գիտե՞ք... (բադիկ)

Իսկ հիմա նայեք փակցված նկարներին:



Նկարագրեք՝ ինչպիսի՞ն են բադիկները: Ես դատողություններ եմ անելու, եթե դրանք սխալ լինեն, դուք կասեք ճիշտը:

1. Բադիկների վիզը երկար է կտրապի վզի պես: (ոչ, կարճ է):
2. Բադիկների կտուկը երկար է ու սուր՝ կաշաղակի կտուկի պես (ոչ, բադիկի կտուկը լայն է):
3. Բադիկի ոտքերը երկար են արագիլի ոտքերի պես (ոչ, բադիկի ոտքերը կարճ են):
4. Բադիկն ունի հպարտ, կարծալի նման սիգաճեմ քայլվածք (ոչ, բադիկը քայլում է շորորալով, կարծես կաղ լինի):
5. Բադիկի փոտուրները գունազեղ են ու հրաշափայլ, բադիկի փետուրը բնության հրաշքն է (այո):

-Շարունակե՞ք նկարագրել. Է՞լ ինչպիսին է բադիկը.

**-Կարմրակտուկ, լայնակտուկ, կարմրատոտիկ, կարճատ, ճերմակ, ճերմակափետուր, շուշանաթույր, ճերմակաթույր, հրաշափետուր, շքեղազարդ, փետրազարդ, գեղափետուր, գեղանի, հրաշալի, փափիկ, աննման, սև, մոխրագույն, սպիտակակուրծք...**

Հիմա պետք է գրեք հնգյակ՝ **բադիկ** բառով: Նշված բառերը ձեզ պետք են հնգյակի II ստորը գրելիս:

-Իսկ ի՞նչ բառեր են պետք III տողը գրելիս ( **օրորվող, շորորվող, թռչող, վազող, ուտող, տարուբերվող, լողացող, ճոճվող, կտցահարող, չվող, սուզվող, տեղափոխվող, տեղաշարժվող ...**)

IV տողի համար առաջարկե՛ք ձեր մտքերը.

**Դու անվերջ շորորում ես,  
Դու վայրի սիրուն թռչուն ես,  
Ցամաքում ուշրում ապրող,  
Դու ընտանի և օգտակար,  
Ինչքա՛ն փափուկ փետուր ունես,  
Ի՛նչ ճարպոտ են փետուրներդ,  
Դու ընտանի սիրուն թռչուն,  
Ծանծաղ ջրերում կեր փնտրող,**

V տողը, ինչպես գիտեք, պետք է լրացնի I տողին՝ բաղիկ.

**Վայրի, ընտանի, թռչուն, հավք, ամենակեր, լողորդ, դանդաղաշարժ, բարեկամ...**

-Ինքնաստանձվող թղթերի վրա կազմեք հնգյակներ ու բանակապեր: Հետո դրանք պետք է ամրացնեք ձեր պատրաստած բաղիկի մեջքին ու պոչին:

-Մոտեցե՛ք հեղինակային աթոռին և ներկայացրե՛ք ձեր ստեղծագործություններից որևէ մեկը: Ահա հնգյակների և բանակապերի օրինակներ, որոնք ծնվեցին այս դասին.

Բաղիկ

**Շքեղափայլ, կարճատ, Սուզվող, չվող, շորորող, Ի՛նչ ճարպոտ ես դու,**

Բաղիկ

**Սպիտակաթուլյր, աննման, Լողացող, օրորվող, ճոճվող, Դու գեղանի սիրուն թռչուն,**

Լողորդ

Հրաշափետուր

Բաբկենը

Աշոտը

Դավիթը

Իրինային

Կապիկ նվիրեցին:

Բենիկը

Աննան

Դայանային

Իրիս

Կոնֆետ տվեցին

Բալը

Արքայանարինջն ու

Դեղձը

Իսկուհին

Կերավ

Աշակերտներն իրենց աշխատանքներն ամրացնում են <<Աշխատում ենք սիրով>> պաստառին:





Նրանք գնահատվում են նախապես պատրաստված փոքրիկ բաղիկների նկարներով:

### **Տնային հանձնարարություն.**

-Հաջորդ դասին պատրաստելու ենք մեղուներ և բզեզներ՝ ապլիկացիայի և օրիգամիի տեխնիկայով: Դուք պետք է հավաքեք լրացուցիչ տեղեկություններ մեղուների և բզեզների մասին, բանաստեղծություններ, հանելուկներ, շուռտաստելուկներ, ասացվածքներ:

### **Անդրադարձ**

-Ի՞նչը ձեզ ամենից շատ դուրեկավ այս դասին:

-Բաղիկների նկարները, փուչիկների մեջ գրվածը, հորինված հնգյակներն ու բանակապերը:

Դրվագներ աշակերտների կատարած գործնական աշխատանքներից.





## Եզրակացություն

Ճիշտ կազմակերպված հետազոտական աշխատանք պարբերաբար անցկացնելով՝ մանկավարժը հնարավորություն է ստանում առավել խորը և ճկուն գիտելիքներ ձեռք բերել, հարստացնել գիտելիքների և մանկավարժական հմտությունների իր պաշարը: Տարրական դասարաններում կիրառելով գործնական աշխատանք բաղադրիչը, ձևավորում ենք անյախսի կարևոր կարողություններ և հմտություններ, որոնք վերառարկայական են և պետք են սովորողին ողջ կյանքի ընթացքում: Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում գործնական աշխատանքների ներառումը.

- ✓ Գործնական աշխատանքների կազման ժամանակ պետք է հաշվի առնել դասարանի սովորողների գիտելիքների մակարդակը և յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները:
- ✓ Գործնական աշխատանքների միջոցով երեխաների մոտ ակտիվություն առաջանալուն զուգահեռ նվազում է թերաբժեքության բարդույթը:
- ✓ Վարքագծով ակտիվ սովորողներին, ովքեր դասի նկատմամբ չունեն բավարար հետաքրքրություն, գործնական աշխատանքները հնարավորություն են տալիս առարկան տեսնել այլ կողմից և հետաքրքրությամբ՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերել նաև ուսումնական գործընթացում:
- ✓ Գործնական աշխատանքները ուսուցումը կյանքին կապող լավագույն միջոցն է:
- ✓ Գործնական աշխատանքների օգնությամբ գործողությունները վերացական ձևերի մակարդակից փոխադրվում են պատկերային ընկալումների մակարդակ՝ միաժամանակ ստանալով հստակ ձևակերպումներ:

Գործնական աշխատանքների կազմակերպումը և արդյունավետությունը որոշակիորեն կախված են նաև ուսուցչի պատրաստվածության մակարդակից:

## Օգտագործված գրականության ցանկ

### Մայրենի

1. Կ.Թորոսյան, Կ.Չիբուխչյան «Գործնական աշխատանքներ մայրենիից», «Չանգակ» 2017թ.:
2. Կ.Թորոսյան, Կ.Չիբուխչյան՝ «50 հարց ու պատասխան» 1.Թորոսյան, Կ.Չիբուխչյան՝ «Գործնական աշխատանքներ մայրենիից», «Չանգակ տարրական դասարանների ուսուցիչների համար»: Մաս 1-ին, «Չանգակ» հրատարակչություն 2013թ.:
3. Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք: Մաս 2:/Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե./-Եր.:

### Մաթեմատիկա

1. Հանրակրթական պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չփորոշիչ.-Եր., «Անտարես», 2004:
2. Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների չափորոշիչներին ծրագրեր/Մաթեմատիկա.-Եր., «ԿԾԿ» ԾԻԳ. 2007, 2009
3. Միքայելյան Հ.Ս. հանրահաշվի ուսուցման հիմնահարցեր,-Եր., «Էդիթ պրինտ», 2005:
4. Իստոմիևա Ն.Բ., Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2000:
5. «Մաթեմատիկայի վերապատրաստման եռօրյա դասընթացների կյուբերի ժողովածու», «Տիգրան Մեծ» հրատ., Երևան 2000թ.:
6. Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների չափորոշիչներ և ծրագրեր / Մաթեմատիկա.-Եր., «ԿԾԿ» ԾԻԳ. 2007. 2009:
7. Միքայելյան Հ.Ս. Հանրահաշվի ուսուցման հիմնահարցեր.-Եր., 2005:
8. Իստոմիևա Ն.Բ. Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2000:

### Տեխնոլոգիա

1. Ավետիսյան Ժ. , Տեխնոլոգիա 1-4 Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.:
2. Արևելքի ժողովուրդների առածներ և ասացվածքներ, Երևան 1969թ.:
3. Հովսեփյան Ա., Կարապետյան Ա., Տողանյան Ն., Ավագյան Լ., Ես և շրջակա աշխարհը, Դասագիրք, III դասարան, Երևան, 2009թ.:
4. Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վերոյան Լ., Տեխնոլոգիա, դասագիրք, III դասարան , Երևան, 2008թ.:
5. Պապիկյան Կ.Օրիգամի, Ուսումնական ձեռնարկ. «Չանգակ-97», Երևան, 2008թ.:
6. Սլադկով Ն., Թռչուններ, Երևան, 1988թ.:

